ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«15» փետրվարի 2023 թվականի N 20 -Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ 05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 47-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԻ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ մասով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 689 -րդ հոդվածով , «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բնական գազի անխափան մատակարարման, գազահամակարգերի սպասարկման և անվտանգ շահագործման նպատակով, տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ,Պուշկինո,Ամրակից բնակավայրերի սուբվենցիոն ծրագրով 2021 թվականին կառուցված՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ներքոհիշյալ վկայականներում նշված գույքը (գազահամակարգը) անհատույց օգտագործման իրավունքով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելու համար՝

h/h	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի տրման ամսաթիվը
1	19082022-06-0058	19.08.2022թ.
2	19082022-06-0047	19.08.2022թ.
3	22082022-06-0011	22.08.2022թ.

2. Թույլատրել Գյուլագարակ համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հետ կնքել անշարժ գույքի վերոհիշյալ վկայականներում նշված գույքերի անհատույց օգտագործման պայմանագրեր՝ իրականացնելով նաև դրանց առընչվող անհրաժեշտ փաստաթղթերի ստորագրման, դրանցից բխող գործառույթների (այդ թվում՝ նոտարական վավերացման) կազմակերպման և պատշաճ իրականացնման գործընթացը:
3. Սույն որոշմամբ նշված գույքերը անհատույց օգտագործման իրավունքով հանձնել (գույքի անհատույց օգտագործման պայմանագրերը կնքել) 5 (հինգ) տարի ժամկետով, սահմանելով, որ եթե կողմերից որևէ մեկը պայմանագրերի գործողության ժամկետից 1 (մեկ) ամիս առաջ չի հայտնում դրանք լուծելու կամ նոր պայմանագիր կնքելու մասին, ապա պայմանագիրը, նույն պայմաններով, շարունակաբար երկարաձգված են համարվում հինգական տարի ժամկետով:

4. Ուժը կորցրած ճանաչել Գյուլագարակ համայնքի ավագանու 2022թ. սեպտեմբերի 05-ի ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ, Պուշկինո, Ամրակից գյուղերի ցածր ճնշման գազատարի նոր կառուցված ցանցը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին 47-Ա որոշումը :

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (19)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Մարիկյան Արմեն		—	—	—
Այվազյան Վրույր		—	—	—
Մագթաղյան Գնել		—	—	—
Քալաշյան Վարսենիկ		—	—	—
Թորոսյան Հրայր	—	—	—	բացակա
Տոնոյան Արտյոմ		—	—	—
Գրիգորյան Թամարա		—	—	—
Խաչատրյան Ռոզիտա		—	—	—

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/